ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/45

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ

«Այթի 365» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Նազարյանի (պետական գրանցման վկայական թիվ 264.110.1044419),

«Այթի 365» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 30.04.2020թ.),

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 30.04.2020թ.)

քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից 27.04.2020թ. ներկայացված (28.04.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/45 բողոք), պարզեցի հետևյալը.

1.«Այթի 365» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Այթի 365» ՍՊ ընկերությունը (հետայսու նաև՝ Ընկերություն) 27.04.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.03.2020թ. հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցում (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը հայտարարվել է առանց ֆինանսական միջոցների առկայության՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում:

Ընկերությունը հայտնել է, որ www.armeps.am համակարգում առկա գնումների պլանի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ հանդիսանալով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա առանց ֆինանսական միջոցի առկայության և համապատասխանաբար նախահաշվային գնի հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգ՝ գնումների պլանում բացակայում է տվյալ ընթացակարգի նախահաշվային գինը:

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.7-րդ կետի համաձայն՝ ընթացակարգի հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու

նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ՝

- միևնույն գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է առնվազն մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը չկայացած է հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված.

- ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականությունները ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ

որում համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ աշխատանքի կատարման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրը ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում.

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի:8.8 Պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտիպատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է հայտում ներառված փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարել դրանք և վերադարձնում է հանձնաժողովի քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Այթի 365» ՍՊԸ-ն:

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնվելիք ծառայության պլանավորված առավելագույն գինը կազմել է 8 մլն ՀՀ դրամ:

Նույն կետի համաձայն՝ հայտեր են ներկայացրել 3 մասնակից, որոնք համապատասխանաբար առաջարկել են հետևյալ գները՝ «Այթի 365» ՍՊԸ-ն՝ 9 մլն ՀՀ դրամ, «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն՝ 9 985 200 ՀՀ դրամ, «Ջի Էմ Զեթ Սերվիս» ՍՊԸ-ն՝ 7 500 000 ՀՀ դրամ:

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետը, այն է՝ առաջարկվող գինը, ապրանանքրեի և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և

չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, և քանի որ մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են գնումն իրականացնելու համար պլանավորված առավելագույն գինը, նույնիսկ այն դեպքում, երբ հաշվարկվում է մասնակիցների կողմից ներկայացված ինքնարժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշում է կայացրել չկայացած հայտարարել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնման ընթացակարգը:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընկերությունը նշել է, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը այս եղանակով, այս հիմնավորմամբ և այս հիմքով չեղյալ հայտարարելով «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնման ընթացակարգը՝ խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները հետևյալ հիմնավորմամբ.

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը հայտարարվել էր առանց ֆինանսական միջոցների առկայության՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և առանց ֆինանսական միջոցի առկայության և համապատասխանաբար նախահաշվային գնի: Ավելին, Ընթացակարգի հրավերի 8.7-րդ կետը նույնպես առանձնացնում է առանձին երկու դեպք՝ երբ ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք

ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Այլ կերպ ասած, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա առանց ֆինանսական միջոցի առկայության և համապատասխանաբար նախահաշվային գնի չի կարող կիրառվել այն հիմնավորումը, որի համաձայն մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են գնումն իրականացնելու համար պլանավորված առավելագույն գինը (արձանագրությունում գնահատող հանձնաժողովը կիրառել է հենց այս հասկացությունը), քանի որ նախ, օրենսդիրը կիրառում է ոչ թե «Պլանավորված առավելագույն գին» հասկացությունը, այլ «Գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը» հասկացությունը, ինչը տվյալ դեպքում այս ընթացակարգի շրջանակներում առկա չի եղել, քանի որ Ընթացակարգը հայտարարվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Բացի այդ, հենց Ընթացակարգի հրավերի 8.7-րդ կետը առանձնացնում է բանակցություններ հրավիրելու առանձին երկու դեպք՝ երբ ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Ուստի այս հիմնավորմամբ իրավաչափ չէ գնահատող հանձնաժողովի որոշումը չեղյալ հայտարարել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը այն հիմնավորմամբ, որ մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են գնումն իրականացնելու համար պլանավորված առավելագույն գինը:

Ընկերությունը նշել է, որ անգամ եթե տեսականորեն ընդունվի, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա իրականացվելիք գնման դեպքում կարող է առկա լինել իրավիճակ, երբ մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցի գնումն իրականացնելու համար պլանավորված առավելագույն գինը, ապա այս դեպքում էլ գործում է այլ իրավական կարգավորում: Մասնավորապես՝ Հրավերի 8.7 կետը սահմանում է, որ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով

հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները կամ հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընկերությունը գտել է, որ վերոհիշյալ դրույթներից ուղղակիորեն բխում է, որ եթե գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ առանց բացառության պարտադիր անցկացվում են բանակցություններ, և գնահատող հանձնաժողովը չհրավիրելով այդ բանակցությունները՝ անհիմն խախտել է Ընթացակարգի հրավերի իմպերատիվ պահանջները:

Ընկերության պնդմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սխալ է կիրառել նաև իրավական հիմքը՝ նշված ընթացակարգը չեղյալ հայտարարելու համար: Մասնավորապես, արձանագրությունում գնահատող հանձնաժողովը առանց բանակցություններ անցկացնելու արձանագրել է, որ քանի որ մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են գնումն իրականացնելու համար պլանավորված առավելագույն գինը, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը՝ չկայացած հայտարարել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնման ընթացակարգը: Մինչդեռ ակնհայտ է, որ նման իրավիճակ առկա չէ, քանի որ մասնակիցների հայտերը համապատասխանել են հրավերի պահանջներին:

Արդյունքում, «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը չեղյալ է հայտարարվել, որի հետևանքով այդ մրցույթի շրջանակներում խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է «Այթի 365» ՍՊԸ-ի պետական գնման մասնակցության իրավունքի սահմանափմանը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել գնահատող հանձնաժողովի 25.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացրած ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի

կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

«Այթի 365» ՍՊ ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր և իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Պատվիրատուն, ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 28.04.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/6239-2020 գրության՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տրամադրելու պահանջի, հայտնել է, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների կազմակերպման կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն, ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել, չնայած տվյալ գնման առարկայի ձեռքբերման համար գնման հայտով պլանվորվել է առավելագույն գին:

Սույն թվականի մարտի 25-ին կայացած գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի ընթացքում պարզ է դարձել, որ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցել են տվյալ գնումը կատարելու համար գնման հայտով պլանավորված առավելագույն գինը, նույնիսկ այն դեպքում, երբ հաշվարկվում է մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը:

Ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջները և հաշվի առնելով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությունը՝ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում առաջարկված գների նվազեցման վերաբերյալ բանակցություններ չեն վարվել, քանի որ այն կդիտարկվեր որպես ավելորդ և չհիմնավորված ժամանակի և ռեսուրսի վատնում:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովի սույն թվականի մարտի 25-ի թիվ 2 որոշման համաձայն՝ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը:

Միևնույն ժամանակ պատվիրատուն նշել է, որ սույն գնման առարկայի ձեռքբերման համար կրկին հայտարարվել է մրցույթ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Այթի 365» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտը մերժվել է՝ գնային առաջարկի բացակայության հիմքով:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն հայտնել է, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության համաձայն, և «Այթի 365» ՍՊԸ-ի հայտարարությունը առ այն, որ ընթացակարգը հայտարարվել է ոչ իրավաչափ, չի համապատասխանում իրականությանը:

Ինչպես նաև Պատվիրատուն նշել է, որ ներկայացնում է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգին առնչվող փաստաթղթերը, այդ թվում՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տարեկան գնումների պլանում կատարված համապատասխան փոփոխությունը և գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում հրապարակված փոփոխության հղումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***12.03.2020թ.:***

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Այթի 365» ՍՊ ընկերության կողմից 27.04.2020թ. ներկայացված բողոքը, «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով Ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ .

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է**, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով <u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) **գնումները համակարգող**

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:...

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***<u>12.03.2020թ.:</u>***

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ԳԲՔԱ-ՆԳ-2020/45 բողոքի քննության շրջանակներում դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվությունը և արձանագրել, որ Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում ***<u>12.03.2020թ.</u>*** հրապարակվել է 2020 թվականի գնումների պլանում կատարված փոփոխությունը, մինչդեռ արձանագրում եմ, որ հրապարակված փաստաթղթում բացակայում է

48331200/501 ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով նախատեսված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգի գնման առարկան:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, հետևաբար, Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած: Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ Ընթացակարգը գնահատող հանձնաժողովի 25.03.2020թ. թիվ 3 որոշմամբ արդեն իսկ հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ուստի բողոքի պահանջը չի կարող բավարարվել և այն ենթակա է մերժման, քանի որ Ընթացակարգը սույն որոշման համաձայն, ըստ էության, պետք է հայտարարվեր չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Այթի 365» ՍՊԸ-ի կողմից 27.04.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**